



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ
ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՆԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
<ԱՄԱՆԱԿԱՆ>



ՄԵԴԻԱ
ԱՍՈՑԻԱՅԻՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(7), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՐԻՎԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆԻՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

*The current issue is dedicated to the brave defenders
of the Holy land of Artsakh in the war unleashed by
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.

The publication of the 4th (7th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ,
член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

*Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при
содействии ООО «Медиа ассоциация».*

Անի Սահակյան. Վիրտուալ կազմակերպությունների առանձնահատկությունները..... 155
Ani Sahakyan. Features of Virtual Organizations
Ани Саакян. Особенности виртуальных организаций

Վահագն Տեփոյան. Տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունների գործոնային վերլուծություններ..... 164
Vahagn Teroyan. The Factor Analysis of the Influence of the Financial System Indicators on the Summarized Economic Indicators
Ваагн Тепоян. Факторный анализ влияния показателей финансовой системы на сводные экономические показатели

ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ, PEDAGOGY, ПЕДАГОГИКА

Մերի Հովհաննիսյան. Հեռավար ուսուցման առանձնահատկությունները..... 178
Meri Hovhannisyanyan. Peculiarities of Distance Learning
Мери Ованнисян. Особенности дистанционного обучения

ԼԵԾԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

Լուսինե Սողոմոնյան. Գերմաներեն երկխոսության հոգելեզվարանական բնութագրերը..... 188
Lusine Soghomonyan. The Psycholinguistic Characteristics of German Dialogues
Лусине Согомонян. Психолингвистические характеристики диалогов в немецком языке

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Անուշ Թասալյան. Եղիշե Չարենցը և «Ստանդարտ» հանդեսի միակ համարը..... 199
Anush Tasalyan. Yeghishe Charents and the Only Issue of «Standard» Magazine
Ануш Тасалян. Егише Чаренц и единственный номер журнала «Стандарт»

Արամ Խաչատրյան. Փնացքի ու երկաթուղու ֆունկցիոնալ նշանակությունը Հրաչյա Սարիբեկյանի «Ապուլների ուղևորությունը» վեպում..... 206
Aram Khachatryan. Functional Significance of the Train and Railway in the Novel «Journey of Idiots» by Hrachya Saribekyan
Арам Хачатрян. Функциональное значение поезда и железной дороги в романе «Путешествие идиотов» Грачьи Сарибекяна

Շուշան Խաչատրյան. Մուխտար Աուեզովը և դազախական դրամատուրգիան 1920-1940-ական թթ.-ին..... 213
Shushan Khachatryan. Mukhtar Aueзов and Kazakh Dramaturgy in the 1920-1940s
Шушан Хачатрян. Мухтар Ауэзов и казахская драматургия в 1920-40-ых годах

Սիրանուշ Փարսադանյան. Պատմական դեպքերի գեղարվեստական մարմնավորումը Հովհ. Սիրոզյանի Վանասնդեցու «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում..... 223
Siranush Parsadanyan. Fictional Illustration of Historical Events in «Hayk, Aram and Ara's Scene» Poem by Hovhannes Mirzayan Vanandetsi
Сирануш Парсаданян. Художественное олицетворение исторических событий в поэме «Знаменитые деяния Айка, Арама и Ара» Ованнеса Мирзаяна Ванандеци



**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԼԵՉՎԱԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ***

ՀՏԴ 811.112.2

ԼՈՒՍԻՆԵ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

*Երևանի Բրյուսովի անվան պետական համալսարանի
մասնավարժության և լեզուների մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ,
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
lsqghomonyan@mail.ru*

Հոդվածի նպատակն է ներկայացնել գերմաներեն երկխոսությունների հոգելեզվաբանական առանձնահատկությունները հաղորդակցային իրադրություններում «Գերմաներենը որպես օտար լեզու» դասագրքերի (Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2) երկխոսությունների ձայնագրությունների հաշվառմամբ:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել գերմաներեն բանավոր խոսքի՝ լեզվաբանական տեսանկյունից կատարված տեսական դրույթները, քննարկել բնական երկխոսական հաղորդակցումն ապահովող պայմաններն ու կանոնները, բացահայտել գերմաներեն երկխոսության հոգելեզվաբանական առանձնահատկությունները կառուցվածքային-շարահյուսական վերլուծությամբ:

Կիրառված մեթոդներն են՝ վերացարկում, համեմատություն, վերլուծություն, դեդուկցիա:

Հոդվածում երկխոսությունները վերլուծվում են որպես առօրյա իրավիճակներին հարիր նպատակաուղղված, ինքնաբեր գործողություններ:

Երկխոսությունների՝ լեզվական տիրույթում հոգեբանական գործոնների հաշվառմամբ վերլուծությունը թույլ է տալիս հստակ տարրորոշել գրավոր ու բանավոր խոսքում սահմանագծվող տարաբնույթ գործառույթներով կառուցվածքային-շարահյուսական կառույցները: Ուսումնասիրման արդյունքում վերհանվում ու համակարգվում են բավմասիսի հաղորդակցային նպատակներ արտացոլող լեզվական կառույցներ՝ արտահայտված իմաստային-շարահյուսական ներուժ ունեցող բառաբերականական և հնչարտաբերական ասպեկտներով:

Հիմնաբառեր՝ բանավոր հաղորդակցություն, ինքնաբուխ խոսք, լեզվական գիտելիքներ, հոգեբանական գործոններ, շարահյուսական կառույցներ:

Օտարալեզու բանավոր հաղորդակցության հաջողվածությունը ենթադրում է իրադրային իրավիճակներում և առանձնահատուկ համատեքստերում անկաշկանդ լեզվի կիրառում ֆիզիկական ու մտավոր ունակությունների և գործողությունների, լեզվական և հարալեզվական բաղադրիչների համադրությամբ: Իրադրային հաղորդակցությունում օտարալեզու բնական խոսքը թույլ է տալիս սովորողներին

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2020թ., գրախոսվել՝ 20.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

գիտակցել աուտենտիկ լեզվի կիրառության հատկանիշները՝ դրդելով նրանց հաղորդակցվել ինքնաբուխ և առանց վախի սխալներ անելուց: Հաղորդակցության բնականությունն իր արտացոլումն է գտնում նաև լեզվական կոմպետենցիայի բաղադրիչներում՝ բառաբերականական ու հնչյունաբանական մակարդակներում: Ուշագրավ է այստեղ վկայակոչել Դանների պնդումն այն մասին, որ ավելի շատ հիշատակվում են հաղորդակցության ոչ խոսքային և հարալեզվական ասպեկտները, մինչդեռ բանավոր խոսքի շարահյուսական հատկանիշները լիովին անուշադրության են մատնվում⁴¹⁴: Ի լրումն դրա՝ Յունեկեն և Շթայնիզը մատնանշում են, որ լավ տպավորություն է թողնում խոսելիս նաև քերականությանը տիրապետելը⁴¹⁵:

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվի լեզվական համակարգում առկա են որոշակի օրինաչափություններ, որոնց չիմացությունը կարող է ձախողել հաղորդակցման գործընթացը: Այդ մասին են վկայում բանավոր խոսքային կարողությունների գնահատման գործընթացում առաջնային դիրք ունեցող լեզվական գիտելիքների ճշգրտությունը մատնանշող չափանիշները:

Ի դեմս բանավոր հաղորդակցության ստուգման ու գնահատման գործընթացում լեզվական գործոնների մշտակա առաջնահերթության՝ հարկ ենք համարում քննության առնել գերմաներեն երկխոսությունների՝ բանավոր ու գրավոր խոսքում սահմանազծվող հոգելեզվաբանական առանձնահատկությունները՝ գերմաներենը որպես օտար լեզու ուսումնասիրող (DSD I, DSD I Pro) դպրոցների չափորոշչում (Rahmenplan "Deutsch als Fremdsprache") սահմանված A2 մակարդակը նախանշող բանավոր հաղորդակցային կարողությունների, A2/B1 մակարդակի բանավոր (երկխոսության) քննության գնահատման չափանիշների, դասագրքերի երկխոսությունների ձայնագրությունների, գերմաներեն երկխոսության վերլուծությունների վերաբերյալ կատարված հետազոտությունների համակցված ուսումնասիրությամբ: Որպես փաստական կյուբ ենք ընտրել դասագրքերին կցված երկխոսությունների ձայնագրությունները, որոնք ընդգրկում են բազմաբնույթ թեմաների շուրջ ծավալվող իրավիճակային երկխոսություններ: Կարծում ենք՝ հարելով բանավոր ինքնաբեր (spontan) խոսքին՝ այսպիսի ձայնագրությունները արժեքավոր կլինեն լեզվական կոմպետենցիայի բաղադրիչների (քերականություն, բառապաշար, հնչյունաբանություն) համալիր վերլուծության համար:

Քերականություն

Բանավոր խոսքին նվիրված մոդելների ուսումնասիրությունից բխում է, որ երկխոսական կոմպետենցիան (Gesprächskompetenz) իր արտահայտումն է գտնում ոչ թե առանձին արտահայտությունների լեզվական տիրույթում, այլ լեզվական գործողության իրավիճակային պատշաճության մեջ:

Հոգելեզվաբանական տեսանկյունից խոսելը բարդ գործընթաց է, որտեղ առաջին պլան է մղվում հաղորդակցման ընթացքի բարդությունը: Սահմանափակ ժամանակահատվածում հարկ է միաժամանակ ուշադրությունը սևեռել այնպիսի ենթագործընթացների վրա, ինչպիսիք են՝ պլանավորումը, շարահյուսական կառուցումը, արտաբերումը, նախադասության հնչերանգը, բառապաշարի ընտրությունը⁴¹⁶:

Մեթոդական գրականությունում իրարամերժ տեսակետներ են առկա՝ կապված օտարալեզու բանավոր խոսքի արդյունավետությունն ապահովող չափանիշներից

⁴¹⁴ **Dannerer M.** Gesprochene Sprache und mündliches Interagieren im Gemeinsamen Europäischen Referenzrahmen. In: Fandrych/Thonhauser, 2008, S. 177-201, S.194.

⁴¹⁵ **Huneke H., Steinig W.** Deutsch als Fremdsprache, Eine Einführung, 2. Überarbeitete und erweiterte Auflage, Erich Schmidt Verlag, Berlin 2000, S.82-83.

⁴¹⁶ **Krumm H.** Die sprachlichen Fertigkeiten. isoliert-kombiniert-integriert: in Fremdsprache Deutsch, 20014, S.5-9, S.5.

սահունություն (Flüssigkeit) և *ճշգրտություն (Korrektheit)* գերակայության հետ: Այդուհանդերձ, թվարկված երկու չափանիշների համակցված հաշվառումն ապահովող լեզվական գիտելիքների տիրապետումը միայն կապահովի լեզվի պատշաճ կիրառումը հաղորդակցման մեջ: Իհարկե, այստեղ պետք է տարանջատել ճշգրիտ բանավոր խոսքը գրավորից: Այս համատեքստում հարկ է հիշատակել լայն տարածում ունեցող երևույթը, երբ գերմաներենի՝ որպես օտար լեզվի դասին սովորողներից պահանջվում է շարահյուսորեն ավարտուն լիակատար նախադասություններով խոսել, պատասխանել հարցին ամբողջ նախադասությամբ: Սակայն հանձին բանավոր խոսքի վրա անմիջական ներգործություն ունեցող հոգեբանական գործոնների՝ բազմապիսի առօրյա իրադրություններում *ուշադրության, կենտրոնացման, քաջության, հուզարտահայտչականության, մոտիվացիայի*, առօրյա իրավիճակներում հաղորդակցվելը ենթադրում են նախ և առաջ ինքնաբուխ խոսք՝ արտահայտված կարճ, պարզ զրույցների հերթագայությամբ: Հատկանշական է այստեղ Շաթցի պնդումը, ըստ որի՝ բարդ նախադասությունները բանավոր հաղորդակցությունում կիրառելի չեն, քանի որ խոսողը մոռանում է նախադասության սկիզբը, ինչը ընդհատում է խոսքի կառուցվածքը: Մինչդեռ մի քանի բառից բաղկացած նախադասությունները առավել հարմար են հանպատրաստից խոսքում⁴¹⁷:

Այս առումով վճռորոշ դեր ունի զեղչումների (Elipsen) գործածումը բնական իրադրային լեզվի ուսումնառության խթանման գործում: Այս երևույթները, որպես կանոն, պակասի արտահայտում չեն, այլ երկխոսությունների իրագործումն ապահովող նախադրյալներ են⁴¹⁸: Հարկ է ընդգծել, որ զեղչումների հիմնական կիրառությունը հիմնվում է լեզվի տևտեսման սկզբունքի վրա, ըստ որի՝ կարիք չկա ասել այն, ինչը ունկնդրի համար հասկանալի է համատեքստից⁴¹⁹: Երկխոսությունների ձայնագրությունների վերլուծությունների արդյունքում ներկայացնենք առավել հաճախ հանդիպող զեղչումների տեսակները:

- Հնչյունաբանական սղումներ (Elision)

Արտաբերման մակարդակում հնչյունական սղումներն ի հայտ են գալիս մեծամասամբ կրճատ ձայնավոր e-ի դուրս մղմամբ ոչ շեշտվող վանկերում, *Ich frag= mal*⁴²⁰(*ich frage mal*), ինչպես նաև ei երկհնչյունի սղմամբ *ein, eine* անորոշ հոդերում, ... *also =n bisschen eng?*(*also ein bisschen eng?*)⁴²¹

Հնչարտաբերական առանձնահատկություններով տարանջատվում են նաև բայ+es, դերանուն+es համակցումները (Verschleifung), *Stimmt=s?*(*Stimmt es?*) *Machen Sie=s gut*(*Machen Sie es gut*)⁴²² նաև կապ+հոդ(der,die,das) համակցումները, *Nicki:Ja, zu dumm fürs Gymnasium(für das Gymnasium)*⁴²³:

- Ձևաբանական զեղչումներ

Հաճախադեպ են ենթակայի գործառույթ ունեցող *ich, das, es* դերանունների զեղչումները.

L:Verstehe-բացակայում է *ich-ը*

⁴¹⁷**Schatz H.**, Fernstudienangebot Germanistik, Deutsch als Fremdsprache:Fertigkeit Sprechen, Goethe-Institut, München, 2006, S.33.

⁴¹⁸**Becker–Mrotzek M., Brünner G.**, Gesprächsanalyse und Gesprächsführung. Eine Unterrichtsreihe für die Sekundarstufe II, Radolfzell, 2006, S. 27.

⁴¹⁹**Schwitalla J.**, Gesprochenes Deutsch.Eine Einführung, Berlin (3. Aufl.) 2006, S.103

⁴²⁰**Hilpert S., Niebisch D., u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S. 32.

⁴²¹**Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, S.17.

⁴²²**Hilpert S., Niebisch D., u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S. 35.

⁴²³Նույն տեղում, էջ 42

A: *Ja, sieht echt lecker aus*⁴²⁴. - գեղչված է es կամ das դերանունը

Վերոգրյալը մեթոդական գրականությունում սահմանվում է որպես իրավիճակային զեղչում (Ereigniselipse), երբ բացակայող անդամը իրավիճակից կարող է բացահայտվել⁴²⁵:

- Զերականական զեղչումներ

Չեղչումը արդյունավետ է ընդլայնված տեքստեր կառուցելիս: Ինչպես վերը նշեցինք, գերմաներեն երկխոսությունների հարիր են կարճ կապակցումները, որոնք կարող են նույնիսկ մեկ բառով արտահայտվել: Լայն տարածում ունեն ստորոգյալով, հատկապես sein օժանդակ բայով զեղչված հարց-պատասխանները: Ընդգծենք, որ հաճախ հարցերում ստորոգյալների զուգահեռ զեղչվում են հարցական դերանուններ, երբ նմանատիպ հարց վերևում հնչել է:

L: *Und die anderen SuS in deiner Klasse?*

F: *Sie sind ganz okay.*

A: *Du nicht, Luisa?*

L: *Doch, ein bisschen schon.*⁴²⁶

Առանձնահատուկ բազմազանություն են ապահովում պատասխան-արձագանքները: Նրանց ինքնատիպությունը այն է, որ վերջիններս կախված են հարցի կառուցվածքից և բովանդակությունից, ինչպես օրինակ, երբ անհրաժեշտ չէ անվանել հարցում առկա բոլոր տարրերը պատասխանում⁴²⁷:

R: *Hey Alter, alles klar?*

A: *Ja, und bei dir?*⁴²⁸

Չգալի թիվ են կազմում ներկա վաղակատար (Perfekt) ժամանակաձևում *օժանդակ բայի (haben, sein)*, նաև մոդալ բայերով (wollen...) կազմված նախադասություններում *իականտար բայի (Vollverb)* զեղչումները:

B: *Juhu, gewonnen!*

F: *Muss ich, Joachim?*⁴²⁹

Տարածված ձևերից են նաև բայի անորոշ ձևով արտահայտված հորդոր-հրամանները: *Psst, nichts sagen!*⁴³⁰

Գերմաներեն երկխոսությանը ներունակ է նաև ստորադասական նախադասության գլխավոր նախադասության զեղչումը: Մեր դիտարկումներում այդպիսիք են քանի որ (weil), չնայած (trotzdem) շաղկապներով սկսվող երկրորդական նախադասությունները՝ դրսևորվելով որպես շարահյուսորեն ավարտուն միավոր:

N: *Warum denn?*

E: *Weil du so riechst.*

M: *Trotzdem habe ich gewonnen.*⁴³¹

⁴²⁴ Georgiakaki M., Seuthe Ch., u.a, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2014, S.7.

⁴²⁵ Gansel Ch., Textlinguistik und Textgrammatik/Ch. Gansel, F. Jurgens.-Göttingen: Vandenhoeck & Ruprecht, 2009. S. 184-188, S. 185.

⁴²⁶ Georgiakaki M., Seuthe Ch., u.a, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2014, S.5.

⁴²⁷ Филиппов К.А., Лингвистика текста и современный анализ устной речи: учеб. пособие. – СПб.: Изд-во С.-Петерб. ун-та, 2016. – 228 с. 168.

⁴²⁸ Georgiakaki M., Seuthe Ch., u.a, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, S.17.

⁴²⁹ Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S.23.

⁴³⁰ Նույն տեղում, էջ 36

⁴³¹ Georgiakaki M., Seuthe Ch., u.a, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, S.17 Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S. 32.

Չեղոյմներից զատ, գրավոր ու բանավոր խոսքի լեզվական ասպեկտի սահմանագիծը պարզորոշ ուրվագծվում է պատմողական նախադասություններում ստորոգյալի առաջադաս դիրքով (Verberststellung)՝ ինչ-որ տեղ արտացոլելով բացականչական նախադասության իմաստ: Նման կառույցները բնորոշ են առաջին, երրորդ դեմքերին:

J: Boah, bin ich froh!

*L: Oh Mann, war das haesslich!*⁴³²

Ըստ Շվիթալայի՝ ստորոգյալի առաջին դիրքով շատ նախադասություններ հաստատում են ավելի սերտ կապ նախորդ նախադասության հետ⁴³³: Արտաբերման յուրահատկությունից ելնելով՝ կարելի է պնդել, որ ստորոգյալի առաջադաս դիրքը պամանավորված է նաև իրավիճակը կամ գործողությունն ընդգծելու, խոսողի վերաբերմունքը ասույթի բովանդակության նկատմամբ արտացոլելու հետ՝ հաղորդելով հուզարտահայտչականություն:

Շարահյուսական կառուցվածքի տեսանկյունից առանձնակի կարևորում ենք պատմողական նախադասության շարադասությամբ (ենթակա+ստորոգյալ+խնդիր) կիրառվող հարցական նախադասությունները:⁴³⁴

F: Sie haben kein Zimmer frei? ↑⁴³⁵

Վերոնշյալ օրինակում հարցական նախադասության իմաստը պատկերանում է հարցական բարձրացող հնչերանգում (Intonation), հետևապես երկխոսության ստուգման ու գնահատման ժամանակ հարկ չէ որպես սխալ համարել նման շեղումները: Կարելի է պնդել, որ այսպիսի շարահյուսական կառույցների գործածումը պայմանավորված է գերմաներեն գրավոր խոսքի կուռ քերականական կանոնների հետ, որոնց պահպանումը բանավոր խոսքի պլանավորման ու կառուցման փուլերի բարդության պայմաններում կարճ ժամանակում հաճախ հնարավոր չի լինում:

Նկատի առնելով երկխոսական հաղորդակցության հանպատրաստից և ոչ կայուն (flüchtig) բնույթը ժամանակի սղության, իրավիճակային տարբեր դրսևորումների, խոսողի հոգեբանահուզական վիճակի պայմաններում՝ հարկ է որպես զատորոշիչ գործոն վկայակոչել գերմաներեն երկխոսություններին հատուկ այլընտրանքային կառույցները: Որպես այդպիսիք՝ դիտարկվում են ընդլայնումները (Expansionen)⁴³⁶, որոնք շեղվում են գրավոր խոսքի չափանիշներից: Ընդլայնումների դեպքում ավարտուն շարահյուսական կառույցը նոր խոսքային նյութի հավելմամբ ավելի մեծ կառույցի է վերածվում⁴³⁷:

⁴³² **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, S.17.

⁴³³ **Schwitalla J.**, Gesprochenes Deutsch. Eine Einführung, Berlin (3. Aufl.) 2006, S. 107.

⁴³⁴ Ինչպես գիտենք, գրավոր խոսքում առանց հարցական դերանունների (Was...) հարցական նախադասությունները սկսվում են ստորոգյալով, ինչպես օրինակ, *Wollen wir spazieren gehen?*

⁴³⁵ **Hilpert S., Niebisch D., u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S.18.

⁴³⁶ Վերջինս մեթոդական գրականությունում արտահայտվում է նաև որպես աջակողմյան փոխադրում (Rechtsversetzung), որտեղ տարբերակվում են ետադաս դաշտ (Nachfeld) և նախադասության շրջանակում (Ausklammerung) ենթատեսակները: Վեջիններիս ուսումնասիրումը առանձին քննության առարկա է: **Andersen Ch.**, Zur Nachfeldbesetzung in der gesprochenen Sprache. Eine Korpusuntersuchung, Erscheint in: Text im Kontext. Umeå Studies in Language and Literature. 2011.

⁴³⁷ **Dudenredaktion (Hg.) Duden:** die Grammatik: unentbehrlich für richtiges Deutsch. [Der Duden in 12 Bänden. Das Standardwerk zur deutschen Sprache, Band 4]. Mannheim/Zürich: Dudenverlag, 2009, S. 1211

Ելնելով այս աջակողմյան կառույցների (Rechtsversetzung) կիրառման յուրահատկությունից՝ նպատակահարմար ենք գտնում համակարգել ընդլայնումների հետևյալ իմաստատարբերակիչ գործառույթները.

- Թվարկում-*S: Ich habe schon Lampions gekauft* und Kerzen und Luftschlangen.*⁴³⁸
- Բայական անդամի լրացումների (պարագաներ, խնդիրներ) գործառույթ իրականացնող կապական խնդիրներ (Präpositionsobjekte)

*S: Und dann möchte ich dekorieren- *mit Blumen*

*M: Ich möchte, *wegen meiner Ausnahme*⁴³⁹.

- Համեմատություն-*Anna hat das Ergebnis schneller ausgerechnet als alle anderen.*⁴⁴⁰
- Տվյալներ. ծավալուն, բովանդակային առումով կարևոր նշանակություն ունեցող նախադասության անդամները նույնպես կարող են առանձնացվել.

*Wir haben vorher gearbeitet, **verschiedene kleine Jobs.*⁴⁴¹

Այսպիսի ձգվող ձևերի առկայությունը բացատրվում է նրանով, որ խոսողը ժամանակի սղության պատճառով չի կարողանում քննարկվող նյութի առանձին ասպեկտներ պլանավորման մեջ ներառել⁴⁴²: Առերի բնորոշմամբ ընդլայնումները կարող են նոր լեզվական գործողություններ իրականացնել կամ արդեն սկսածներն էլ ձևափոխել⁴⁴³: Ուստի նմանօրինակ դեպքերում կարևորում ենք քաջության (Mut) գործոնը խոսքային հավելումներ իրականացնելիս՝ հաշվի առնելով գրավոր խոսքի բերականական կանոններից շեղվելու ռիսկը, որը չի դիտարկվի որպես ծախսողում:

Բանավոր հաղորդակցության շարահյուսական բնութագրիչներից է կախյալ ստորոգյալի երկրորդ տեղի կառույցը (abhängige Verbzweitkonstruktion), որը կառուցվածքով հարում է վկայակոչում-արտահայտում (Referenz-Aussage-Struktur) և օպերատոր-սկոպուս (Operator-Skopus) կառույցներին⁴⁴⁴: Ներկայացնենք վկայակոչում-արտահայտում կառույցի օրինակ:

*Tim: Aber allein joggen, ** das macht mir keinen Spaß.*⁴⁴⁵

Aber allein joggen-ը, կրելով առանցքային շեշտադրումը, համարվում է վկայակոչում, որին das հարաբերական դերանունով հղում է կատարվում մնացած նախադասությանը կապակցելու համար:

Այսպիսով՝ այս կառույցի լեզվական ասպեկտը հենց երկբաղադրիչ լինելու չափանիշի մեջ է, նաև կախյալ արտահայտությունում բայի երկրորդ դիրքում լինելը:

⁴³⁸ Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S.21.

⁴³⁹ Georgiakaki M., Seuthe Ch., u.a, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, S.19

⁴⁴⁰ Նույն տեղում, էջ 31:

⁴⁴¹ Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S.32

⁴⁴² Zifonun G., Hoffmann L., Strecker B., Grammatik der deutschen Sprache, Band1-4. Berlin etc.: de Gruyter, 1997, S.1671.

⁴⁴³ Auer, P., „Increments and more. Anmerkungen zur augenblicklichen Diskussion über die Erweiterbarkeit von Turnkonstruktionseinheiten“, in: Deppermann, A. / R. Fiehler / T. Spranz-Fogasy (Hgg.), Grammatik und Interaktion, Radolfzell: Verlag für Gesprächsforschung, 2006a, S. 279-294, S.291

⁴⁴⁴ Այս կառույցները հանգամանալից քննարկել է Ֆիեհլերը: Վերջինս վկայակոչում-արտահայտում հասկացությամբ է բնորոշել ձախակողմյան կառույցները (Linksversetzung), Fiehler R., Operator-Skopus-Strukturen, Erschienen in: Sprachtheorie und germanistische Linguistik Jg. 9, 1999, H. 2, S. 169-193. Fiehler, R. Gesprochene Sprache - chaotisch und regellos? In: Denkler, Markus et al. (Hrsg.): Frischwärts und unkaputtbar. Sprachverfall oder Sprachwandel im Deutschen. Münster: Aschendorff, 2008, S. 81-101.

⁴⁴⁵ Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, S 31.

Օպերատոր-սկոպուս կառույցը ևս առանձնանում է երկբաղադրիչ լինելու հատկությամբ: Այստեղ նախադաս դիրքում դրված բառային միավորները (Einzellexeme) ասես ըմբռնման հաստատում են դիտվում մնացյալ ասույթի համար⁴⁴⁶:

*Warte eine Sekunde, **ich schicke dir ein Foto*⁴⁴⁷.

Կարևոր է մատնանշել, որ նախադաս անդամը տարբեր շարահյուսական կատեգորիաների կարող է պատկանել և տարբեր քերականական գործառույթներ ունենալ⁴⁴⁸:

Պարզորոշ երևում է, որ վերոբերյալ կառույցներում ձախակողմյան կապակցությունները իմաստաբանական, շարահյուսական առումով լիարժեք չեն և պետք է լրացվեն:

Ջնչերանգային առանձնահատկություններից ելնելով՝ մատնանշենք, որ այսպիսի կառույցները մի կողմից խոսքի պլանավորումն են հեշտացնում, մյուս կողմից նախադաս կառույցի շեշտադրման միջոցով ունկնդիրներին հնարավորություն են տալիս հատուկ կենտրոնանալու հաջորդող ասույթի վրա:

Երկխոսության ոչ հաստատուն բնութագիրը երևան է գալիս նաև սխալ մեկնարկում, դադարներում, կրկնություններում: Կրկնությունների դեպքում մեծ դեր ունեն շեշտադրությունը, հնչերանգը՝ ընդգծելով արտահայտությունները⁴⁴⁹:

Anna: Ja, vier Semmeln, bitte!

*Verkäufer: Semmeln? †*⁴⁵⁰

Օրինակում կրկնությունը կիրառվում է որպես անակնկալ հարց՝ *բարձրացող հնչերանգով* արտահայտելով զարմանք:

Ընդհատումները գլխավորապես կախում ունեն արտահայտվողի հոգեբանահուզական կարգավիճակից, բառերի փնտրումից:

L: Ach, äh, nichts. Sie sieht nur wirklich sympathisch aus und...

M: Also, das ist doch ...!⁴⁵¹

Բացի վերոբերյալ բնութագրիչներից, քերականական մակարդակում գոյություն ունեն բանավոր խոսքի այլ տարբերակիչ գծեր ևս, ինչպես բայի ժամանակաձևերի հաճախականության առանձնահատուկ գծերը: Այսպես, երկխոսություններում

- Ներկա ժամանակաձևը գերազանցում է անցյալ ժամանակաձևին,
- անցյալ ժամանակաձևերից գերակշռում է ներկա վաղակատարը (Perfekt), իսկ անցյալ կատարյալով (Präteritum) հանդիպում են միայն hatte, war, wollte, konnte բայերը,
- բազմադեպ են ըղծական եղանակով (Konjunktiv Prät.) կիրառվող հետևյալ լեզվական միավորները՝ wollte, könnte մոդալ բայերը, würde+բայ կառույցները, hätte, wäre օժանդակ բայերը⁴⁵²:

⁴⁴⁶ **Fiehler R.**, Wo fängt der Satz an? Operator-Skopos-Strukturen in gesprochen und geschriebener Sprache, Cortès, Colette (Hrsg.): Satzeröffnung. Formen, Funktionen, Strategien, Tübingen: Stauffenburg, 2012 (Eurogermanistik 3). 31-44, S.31.

⁴⁴⁷ **Hilpert S., Niebisch D., u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S. 36.

⁴⁴⁸ **Fiehler R.**, et al.,Eigenschaften gesprochener Sprache. Tübingen: Narr (= Studien zur deutschen Sprache 30). 2004, S. 252.

⁴⁴⁹ **Schwitalla J.**, Gesprochenes Deutsch.Eine Einführung, Berlin (3. Aufl.) 2006, 179.

⁴⁵⁰ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, S9.

⁴⁵¹ **Hilpert S., Niebisch D., u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S. 25.

⁴⁵² Օրինակները՝ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber,(1) 2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber,(1) 2015, **Hilpert S., Niebisch D.** u.a.,Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber,(1) 2017

Ակներև է նաև անուղղակի խոսքի գերակայությունը ուղղակի խոսքի նկատմամբ: Ընդ որում, անուղղակի խոսքն արտաբերվում է առանց որ (dass) շաղկապի՝ այսպիսով ունենալով վերը քննարկված կախյալ ստորոգյալի դիրք: *L: Frau Homburg hat gesagt, wir sollen den Aufsatz vorbereiten.*⁴⁵³

Բարդ նախադասությունների գործածման տեսանկյունից հաճախ կիրառելի են պայմանի պարագա(wenn), ուղիղ ինդիք(dass) բարդ ստորադասական նախադասությունները: Ըստ որում, առավել հաճախակի կիրառվում է ածական+որ (Adj.+dass) կառույցը:

*Schön, dass du hier bist*⁴⁵⁴.

Բառապաշար

Բառապաշարային գիտելիքները մեծ դեր ունեն բանավոր հաղորդակցության արդյունավետության գործում: Անվիճելի է, որ ինքնաբերաբար ու սահուն խոսքը ոչինչ այնպես չի խոչընդոտում, ինչպես բառի շուրջ մտորումը⁴⁵⁵: Բանավոր խոսքի սահունության նախադրյալներից է առանձին արտահայտությունների ավտոմատացումը, ինչն արտացոլվում է գլխավորապես կայուն կապակցություններում⁴⁵⁶:

Այժմակարգակում բառապաշարային գիտելիքներն ուղեկցող չափանիշները վկայում են, որ բառապաշարը բավարարում է կոնկրետ ու ծանոթ առօրյա իրավիճակները լեզվական առումով հաղթահարելու համար: Ամմասն չի մնում տեսակետ արտահայտելու, հիմնավորելու, այլոց կարծիքներին արձագանքելու համար անհրաժեշտ պարզ արտահայտչամիջոցների տիրապետումը⁴⁵⁷:

Այս կապակցությամբ տեղին է դասակարգել կոնկրետ հաղորդակցային պահաջմունքների հաղթահարման գործում նշանակալի դեր ունեցող բանավոր փոխազդեցության սահունությունն ապահովող բազմաբնույթ հաղորդակցային նպատակներ արտահայտող կայուն բառ-կառույցները.

- Օպերատոր-սկոպուս կառույցում նախադաս դիրք ունեցող բառ-կապակցություններ-*und, denn, übrigens, aber, ehrlich gesagt, Mal sehen, zum Beispiel...*
- Հարցական նախադասություններում ետադաս դիրքում որպես հավելում գործածվող գլխավորապես հաստատում արտահայտող բառ-կապակցություններ-*nicht wahr?, oder?, Verstehen Sie?*
- Գնահատում, կարծիք արտահայտող կապակցություններ-*Am lustigsten finde ich..., ich denke, dass..., ich glaube, dass....*
- Տարաբնույթ արձագանք արտացոլող արտահայտություններ- *Ja, genau, das stimmt nicht, վերաբերականներ, ձայնարկություններ-Na, Klar, Boah*
- Մատնանշում արտահայտող բառեր (Deixis)⁴⁵⁸- *hier, heute, höchstens, die, der, das, die Frau da drüben.*⁴⁵⁹

⁴⁵³ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, S.15

⁴⁵⁴ Նույն տեղում, էջ 27:

⁴⁵⁵ **Schatz H.**, Fernstudienangebot Germanistik, Deutsch als Fremdsprache: Fertigkeit Sprechen, Goethe-Institut, München, 2006, S. 56.

⁴⁵⁶ **Aguado K.**(.), Kognitive Konstituenten mündlicher Produktion in der Fremdsprache: Aufmerksamkeit, Monitoring und Automatisierung.“ In: *Fremdsprachen Lehren und Lernen (FLuL)*, 32: 2003, S.11-26, S. 21.

⁴⁵⁷ **Bausch, Karl-Richard** (Vorsitz), Rahmenplan „Deutsch als Fremdsprache“ für das Auslandsschulwesen, Köln, den 7. September 2009.

⁴⁵⁸ Իմոն առանձնացնում է տեղի, ժամանակի, սաստկացնող իմաստ (Intensifikatoren) արտահայտող այսպիսի ցուցական բառեր: hier, heute, gestern (extrem, absolut, total, ehrlich, ganz

Ասվածի լույսի ներքո հարկ ենք համարում ընդգծել գոյականին փոխարինող *der, die, das* հարաբերական դերանունների բազմադեպ կիրառությունը բանավոր հաղորդակցությունում: Կարծում ենք՝ վերջիններս ևս խոսքի տևտեման հետևանք են, երբ նախորդ մտքում հիշատակվել է տվյալ գոյականը: *Ich nehme die* hier*⁴⁶⁰.

Չնչունաբանություն

Չալի բնորոշմամբ խոսելիս կարող ենք խուսափել բառերից և քերականական կառույցներից, որոնց չենք տիրապետում, բայց արտասանությունից խուսափել չենք կարող⁴⁶¹:

Իրադրային երկխոսություններում, որոնցում պարզ, անկեղծ հաղորդակցումն է գերակայում, նշանակալից է հուզականությունը՝ դրսևորվելով համապատասխան հնչերանգային ու հարալեզվական միջոցներով: Առօրյա-խոսակցական երկխոսություններին ներունակ են դադարները (*Sprechpausen*), ձայնի բարձագման (*Tonhöhe*) փոփոխությունները, խոսելու միջին արագությունը (*Sprechgeschwindigkeit*): Թերևս հենց հնչերանգային միջոցներն են նպաստում, որ խոսակիցը հասկանա դադարներով, ոչ ավարտուն խոսքը: Գաղտնիք չէ, որ հնչերանգը պայմանավորված է խոսողի հաղորդակցական նպատակադրումներով, ասույթի կառուցվածքային հատկանիշներով, բառային-քերականական միջոցների գործածմամբ: Ըստ որում, բարձր հնչերանգը բացի հարցական նախադասությունից (վերջինս քննարկվեց վերևում), պայմանավորված է նաև նոր տեղեկույթով՝ արտահայտվելով տարբեր զգացական նշույթներով և հաղորդելով համապատասխան հուզարտահայտչականություն:

*L: Na***, das ist doch 'prima!' ↑*⁴⁶²

Doch եղանակավորող մասնիկը նպաստում է ձայնի բարձրագմանը՝ միաժամանակ արտահայտելով հիացմունք: Չարկ է մատնանշել նաև *Na* ձայնարկությունից հետո խոսելու դադարը: Փաստենք, որ այսպիսի նախադասություններում հնչերանգի բարձրագմանը նպաստում է բազմապիսի եղանակավորող նույթների կիրառումը:

Բարձր հնչերանգի և հուզարտահայտչականության որոշիչ դերի մասին են վկայում նաև ստորոգյալի առաջին դիրքով արտահայտված կառույցները: *L: Oh Mann**, war 'das haesslich!' ↑*⁴⁶³

Նման կառույցներում մերթ շեշտվում են ենթակաները, մերթ մակբայները:

Ասույթի տարբերակման, իմաստային նշանակության շեշտադրման տեսակետից ուշագրավ են հնչերանգային դադարներով հարուստ ձախակողմյան և աջակողմյան կառույցներով, կոչականով, ձայնարկությունով արտահայտված նախադասությունները:

*Opa: Das erste Mal 1999 hier in Deutschland, ** da hat es dich noch gar nicht gegeben.*

*M: Ich möchte hier bleiben, * wegen meiner Ausnahme*

*L: Vor ein paar Wochen hattest du in Englisch eine Fünf, ** richtig? ↑*

K: Na, 'Günther, ** was ist denn los mit dir? ↑*⁴⁶⁴

klar...), **Imo, W.**, Ad-hoc Produktion oder Konstruktion Verfestigungstendenzen bei Inkrement-Strukturen im gesprochenen Deutsch. In A. Lasch & Ziem, A. (Hrsg.), Konstruktionsgrammatik III. Aktuelle Fragen und Lösungsansätze Tübingen: Stauffenburg, 2012, S. 239–254.

⁴⁵⁹ Օրինակները՝ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, **Hilpert S., Niebisch D. u.a.**, Schritte Plus Neu: 3+4 Niveau A2, Hueber, (1) 2017.

⁴⁶⁰ **Hilpert S., Niebisch D. u.a.**, Schritte Plus Neu: 3+4 Niveau A2, Hueber, (1) 2017, S.26

⁴⁶¹ **Hall, Ch., Natunen M., Fuchs B., Freihoff R.**, Deutsche Aussprachelehre: Ein Hand- und Übungsbuch für Sprechern des Finnischen, Finnlectura, Helsinki, 1995, S.14

⁴⁶² **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, S.28

⁴⁶³ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, S.30.

Ընդգծենք, որ ընդլայնումների դեպքում խոսելու դադարի տևողությունը փոփոխական է՝ արտահայտված երկար կամ կարճ դադարներով:

Վերոգրյալի համաձայն՝ կարելի է արձանագրել, որ խոսքի տարանջատման, բառի առանցքային իմաստը ընդգծելու համար էական դեր ունեցող մեղեդայնությունը, բառի շեշտադրության ճշգրտությունը օժտված են իմաստաբանական-շարահյուսական և խոսքի եղանակավորման ներուժով:

Այսպիսով՝ ամփոփելով բանավոր հաղորդակցման լեզվական գործոնների ուսումնասիրությունը՝ կարող ենք ընդգծել գերմաներեն երկխոսությունների ինքնատիպ շարահյուսական կառուցվածքը՝ պայմանավորված խոսքի վերարտադրման գործում վճռորոշ դեր ունեցող հոգեբանական գործոններով: Անշուշտ, կարճ ժամանակում հաղորդման կառուցման, փոխադրման և իրականացման փուլերի հաղթահարումը փոխկապակցված է նաև ինտերակտիվ ու մշակութային ասպեկտների հետ: Ներկայացված գերմաներեն բանավոր հաղորդակցության հոգելեզվաբանական բնութագրիչների հաշվառումը էական դեր ունի բանավոր խոսքի ուսուցման և ուսումնառության արդյունավետության բարձրացման գործում: Հատկապես օտար լեզվով կենդանի շփման այժմեական մոտեցման գերակայությունը ենթադրում է հաշվի առնել օտարալեզու սահուն և ճշգրիտ, ինքնաբեր գրույց վարելու համար անհրաժեշտ գործիքակազմը, ինչը էականորեն տարբերվում է գրավոր խոսքի բնութագրական առանձնահատկություններից:

Գերմաներեն երկխոսությունների հոգելեզվաբանական հայեցակերպի այսպիսի ուսումնասիրությունը ենթադրում է վերը նկարագրված բնորոշիչների համապարփակ ընդգրկում բնական բանավոր խոսքի զարգացմանը նպատակաուղղված նոր մոտեցումներով ուսուցման, գնահատման մեթոդիկայի մշակման գործում:

Պայմանական հնչյունական նշաններ⁴⁶⁵

*-կարճ ընդմիջում

**-երկար ընդմիջում

↑- բարձրացող հնչերանգ

'- շեշտադրում

= հնչյունների համակցում, սղում

THE PSYCHOLINGUISTIC CHARACTERISTICS OF GERMAN DIALOGUES

LUSINE SOGHOMONYAN

Brusov State University,

Chair of Pedagogy and Language Teaching, Ph.D. Student,

Yerevan, Republic of Armenia

The aim of the current article is to study the psycho-linguistic peculiarities of German dialogues in communicative situations (based on audio materials of German textbooks *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2*).

⁴⁶⁴ Hilpert S., Niebisch D. u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber,(1) 2017, S.32.

⁴⁶⁵ Պայմանական նշաններն ընտրվել են Ֆիեռլերի՝ բանավոր խոսքի վերլուծությունների համար առաջադրված նշաններից, Fiehler R., Die Vielfalt der Besonderheiten gesprochener Sprache - und zwei Beispiele, wie sie für den DaF-Unterricht geordnet werden kann: Gesprächspartikeln und Formulierungsverfahren, Erschienen in: Imo, Wolfgang/Moraldo, Sandro M. (Hrsg.): Interaktionale Sprache und ihre Didaktisierung im DaF-Unterricht. Tübingen: Stauffenburg, 2015. S. 23-43.

The objectives are as follows: to study the theoretical foundations of German spoken language from the linguistic point of view, to discuss the rules and conditions that provide an authentic conversational speech, to reveal the psycholinguistic features of German dialogues based on their structural-syntactic analysis.

The study was carried out with the use of the following methods: abstraction, comparison, analysis, deduction.

The article analyzes the dialogues as purposeful, spontaneous actions corresponding to the real situation of communication.

Within the framework of communicative-linguistic competence and the psychological factors the analysis of the dialogues, makes it possible to distinguish structural-syntactic structures with various functions, differentiated in written and oral speech.

As a result of the study the linguistic structures with various communicative goals are revealed and coordinated, expressed in lexical-grammatical and phonetic aspects with semantic-syntactic potential.

Keywords: *oral communication, spontaneous speech, linguistic knowledge, psychological factors, syntactic structures.*

ПСИХОЛИНГВИСТИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ ДИАЛОГОВ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

ЛУСИНЕ СОГОМОНЯН

*аспирант кафедры педагогики и методики
преподавания языков ГУ им. В. Брюсова,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение психолингвистических особенностей немецких диалогов в коммуникативных ситуациях (на аудиоматериалах учебников немецкого языка Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2).

В задачи исследования входит: изучение теоретических основ немецкой устной речи с лингвистической точки зрения, обсуждение правил и условий, обеспечивающих разговорную аутентичную речь, выявление психолингвистических особенностей немецких диалогов на основе структурно-синтаксического анализа диалогов.

Исследование проводилось с помощью следующих методов: абстракция, сравнение, анализ, дедукция.

В статье анализируются диалоги как целенаправленные спонтанные действия, соответствующие реальной ситуации общения.

Анализ диалогов в рамках коммуникативно-лингвистической компетенции с учетом психологических факторов позволяет четко различать структурно-синтаксические структуры с различными функциями, разграниченные в письменной и устной речи.

В результате исследования выявлены и скоординированы лингвистические структуры, отражающие различные коммуникативные цели, выраженные в лексико-грамматическом и фонетическом аспектах с семантико-синтаксическим потенциалом.

Ключевые слова: *устная коммуникация, спонтанная речь, языковые знания, психологические факторы, синтаксические структуры.*